Հաշվետվություն

2025 թվականի սեպտեմբերի 13-20-ը Ղազախստանի Հանրապետություն, (Աստանա) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**

   Կարեն Գրիգորյան, Կադաստրի կոմիտեի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի պետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները**

   Ղազախստանի Հանրապետություն, Աստանա, սեպտեմբերի 13-ից 20-ը

3. **Հրավիրող կողմը**

   Ղազախստանի Հանրապետության թվային զարգացման, նորարարությունների և օդատիեզերական արդյունաբերության նախարարություն:

   ՄԱԿ-ի գլոբալ երկրատարածական գիտելիքի և նորարարության կենտրոնի (UN-GGKIC), Կայուն զարգացման նպատակների տվյալների դաշինքի (SDG Data Alliance) և ՄԱԿ-ի գլոբալ երկրատարածական տեղեկատվության կառավարման հարցերով փորձագետների կոմիտեի (UN-GGIM) քարտուղարություն:

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդիրների լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

   Մասնակցություն Եկրատարածական տեղեկատվության կառավարման մեխանիզմների բարելավման և կայուն զարգացման նպատակների իրականացման խթանման վերաբերյալ փորձագիտական խորհրդակցության-հանդիպմանը, ինչպես նաև Կենտրոնական Ասիայի, Հարավային Ասիայի և հարևան երկրների համար ՄԱԿ-ի ինտեգրված երկրատարածական տեղեկատվության շրջանակի (UN-IGIF) վերաբերյալ ենթատարածաշրջանային աշխատաժողովին՝ «Եկրատարածական ռազմավարությունների իրականացում, մարտահրավերներ և հնարավորություններ» թեմայով:

5. **Քննարկված թեմաները**

   5.1. Եկրատարածական տեղեկատվության ստեղծում և կառավարում,

   5.2. Բարձր տեխնոլոգիաների կիրառում, նորարարություն և թվայնացում,

   5.3. Ինտեգրված երկրատարածական տեղեկատվության շրջանակի (IGIF) իրականացում,

   5.4. Նպատակի իրագործման համար արդյունավետ ռազմավարական ծրագրի հաստատում և մշակում,

   5.5. Փորձի փոխանակում և մասնագետների որակավորման բարձրացում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձարցված և քննարկված հարցերը

6.1. Հանդիպման ժամանակ ներկայացվել է հետևյալը՝

- ՀՀ տարածական տվյալների ստեղծման, մշակման և կիրառման առանձնահատկությունները,
- ՀՀ ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ստեղծման ուղղությամբ կատարված աշխատանքները,
- Նոր բազմաֆունկցիոնալ ազգային գեոպորտալի ներդրման ուղղությամբ կատարվող աշխատանքները,
- Սերվերային համակարգի բարելավման ուղղությամբ կատարվող աշխատանքները,
- Կադաստրային քարտեզների վարման մոդուլի և ազգային գեոպորտալի քարտեզագրական համակարգի գործարկման ուղղությամբ կատարված աշխատանքները:

6.2. Տեղի են ունեցել քննարկումներ միջազգային կազմակերպությունների (ESRI, HEXAGON), Ղազախստանի Հանրապետության թվային զարգացման, նորարարությունների և օդատիեզերական արդյունաբերության նախարարության գեոդեզիայի և քարտեզագրության վարչության, ինչպես նաև մասնավոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Հիմնական թեմաները վերաբերվել են տվյալների դասակարգմանը, տեղեկատվության կառավարմանը, տեղեկատվության մատչելիությանը, արհեստական բանականության կիրառմանը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպման ժամանակ պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել կիսվել ոլորտի զարգացման ուղղությամբ իրականացվող քայլերով:

8. Ստորագրությունը, ամսաթիվը

Կարեն Գրիգորյան

24.09.2025